ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1694 - Ա **27 մարտի 2009թ.**

ՆՈՐ ԱՐԵՇԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 88 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՄԱԼԻԿ ԴԱՆԻԵԼԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ, ՕՎՍԱՆՆԱ ՄԻԱՍՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՄԿՐՏԻՉ ՄԻԱՍՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ամալիկ Դանիելի Մկրտչյանի (ծնված 26.11.1938թ.), Օվսաննա Միասնիկի Կարապետյանի (ծնված 06.12.1970թ.), Մկրտիչ Միասնիկի Կարապետյանի (ծնված 08.04.1965թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.88 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 340.45քմ, որից 333.94քմ մակերեսով հողամասն Ամալիկ Դանիելի Մկրտչյանին, Օվսաննա Միասնիկի Կարապետյանին, Մկրտիչ Միասնիկի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 6.51քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1998 թվականը, 28.12.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 11.01.2008թ. հ.121, Երևանի քաղաքապետարանի «Հողի ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 10.03.2009թ. հ.20/2-Ե/102 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 27.02.2009թ. հ.20-Ել-1420 եզրակացությունը, համաձայն որի Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.88 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.88 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ամալիկ Դանիելի Մկրտչյանի, Օվսաննա Միասնիկի Կարապետյանի, Մկրտիչ Միասնիկի Կարապետյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ օրինական 333.94քմ մակերեսով հողամասին կից 6.51քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 6.51քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

3. Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.88 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.88 տուն»։

4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ամալիկ Դանիելի Մկրտչյանի, Օվսաննա Միասնիկի Կարապետյանի, Մկրտիչ Միասնիկի Կարապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ